ԿՈԹԻ

Գյուղի շրջակայքում ամենանշանավոր հուշարձանը Ս. Սարգիս վանքն է, որի կազմում մտնում են հյուսիս-հարավ հաջորդականությամբ իրար կից երկու եկեղեցական շինություն, փոքրիկ թաղածածկ մատուռ՝ կանգնած այս երկուսի մոտ հյուսիսակողմից: Հարավակողմի եկեղեցին, որ ամենախոշորն է՝ պսակված է գմբեթով: Հաստահեղույս պատերը, պայտաձև կամարները թույլ են տալիս ենթադրել, որ շինվել են վաղ միջնադարում:[107]

Վարդան Արևելցին գրում է. «և զԳագ անուանի բերդ և գաւառ ի Գագկայ թագաւորէ շինեալ, ուր կայ հռչակաւոր և սուրբ ուխտն խաչ և եկեղեցի յանուն սրբոյն Սարգսի զօրավարին, օրհնեալ ի սրբոյն Մեսրովբայ վարդապետէն և թարգմանչէն Հայոց, որ կայ ի գլուխս Գագայ...»:[108]

Գանձակեցին հիշատակում է վանքի միայն Մեսրոպաշեն լինելու հանգամանքը. «...զոր կանգնեալ, ասէին, սրբոյն Մեսրոպայ վարդապետին մերոյ»:[109] Այս պատումը կապված է այն հանգամանքին, որ Շապուհի կողմից սպանված Սուրբ Սարգսի մասունքները Հայաստան է բերել Մեսրոպ Մաշտոցը և այս վանքը հիմնադրելով՝ այստեղ է ամփոփել զորավարի ատամը:

Այսպիսով, որպես գմբեթակիր շինություն, այս եկեղեցին պետք է դասվի Հայաստանի հնագույնների թվին՝ V դարի սկիզբ, թեև գմբեթը, իր կլոր թմբուկով, անտարակույս, հետագա վերակառուցման արգասիք է:

Կից փոքր եկեղեցին հայտնի է Ա. Կիրակի անունով: Թաղածածկ է, Ս. Սարգսի հարավային պատի կողմից ընդարձակ բացվածք է արված երկու եկեղեցիների հաղորդակցման համար:

Կոթի Ս. Սարգիս վանքը եղել է Բագրատունի-Կյուրիկյանների, XII-XIII դարերում, ամենայն հավանականությամբ, Վահրամյանների հոգևոր կենտրոնն ու տապանատունը, թեև այդ մասին հավաստի փաստարկներ չկան:[110] Այն գտնվում է գյուղից 6 կմ հյուսիս-արևելք, Քուռ գետի և Ղազախի հովտի հանդիման բարձունքի կատարին: Բլրալանջի քարանձավներում և ցաքուցիր այլ հուշարձանների վրա ևս կան արձանագրություններ:

---

[107] Հուշարձանախմբի հանգամանալի նկարագրությունն ու վերլուծությունը տես Գ. Շախկյան, Լոռի, էջ 165-167:

[108] Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, վերահրատարակություն, Եր., 2001, էջ 147:

[109] *Կիրակոս Գանձակեցի*, 252:

[110] *Ա.Ի. Շահնազարյան*, Վահրամյանների իշխանությունը, Եր., 1990, էջ 11-12: